

Ամփոփ ֆինանսական
հաշվետվություններ անկախ աուդիտորի
եզրակացության վերաբերյալ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական
ընկերություն

31 դեկտեմբերի 2015թ.

Բովանդակություն

| | Էջ |
|--|-----------|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 1 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն | 4 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն | 5 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն | 6 |

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրասր Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Տ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Խորհրդին.

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված Բանկի 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 2016թ. ապրիլի 8-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՄ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Բանկի աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որտեղ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են միևնույն ձևով, ինչպես և աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների, որոնք չեն ներառվում այս ամփոփ ֆինանսական հաշվետվություններում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտին համապատասխան:

Կարծիք

Մեր կարծիքով 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին:

Հանգամանքների լուսաբանումը վերաբերում է այն բանին, որ Բանկի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Բանկի գործունեության անընդհատության սկզբունքից ելնելով: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2014թ. որոշում է կայացրել բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո 30,000,000 հազար ՀՀ դրամ: Բանկի բաժնետերերի և ղեկավարության հավաստիացմամբ նշված պահանջի իրականացումը Բանկը կապահովվի կանոնադրական կապիտալի համալրման միջոցով: Մեր կարծիքը չի ձևավորվել այս հանգամանքի առնչությամբ:

Գագիկ Գյուլբուդադյան
Տնօրեն/բաժնետեր

Զարուհի Ղարիբյան
Աուդիտի ղեկավար

Գրանք Թորնթոն ՓԲԸ
8 ապրիլի, 2016թ.
ք. Երևան



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար |
|--|--|--|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 19,714,397 | 19,316,864 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | (13,431,362) | (12,025,942) |
| Զուտ տոկոսային եկամուտներ | 6,283,035 | 7,290,922 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 1,334,902 | 1,455,759 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | (257,701) | (287,433) |
| Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ | 1,077,201 | 1,168,326 |
| Զուտ առևտրային եկամուտ | 677,989 | 746,151 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ վնաս | - | (855) |
| Այլ եկամուտներ | 1,383,757 | 1,645,630 |
| Արժեզրկման ծախս | (2,398,395) | (4,106,633) |
| Անձնակազմի գծով ծախսեր | (3,070,810) | (3,272,711) |
| Հիմնական միջոցների մաշվածություն | (412,952) | (377,221) |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա | (80,796) | (73,084) |
| Այլ ծախսեր | (2,912,720) | (2,393,969) |
| Շահույթ մինչև հարկում | 546,309 | 626,556 |
| Շահութահարկի գծով ծախս | (187,828) | (94,081) |
| Տարվա շահույթ | 358,481 | 532,475 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | |
| <i>Հողվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում</i> | | |
| Հիմնական միջոցների վերագնահատում | 45,782 | - |
| Չվերադասակարգվող հողվածներին վերաբերող շահութահարկ | (9,157) | - |
| | 36,625 | - |
| <i>Հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում</i> | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս | (468,167) | (578,132) |
| Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթի կամ վնասի փոխանցված զուտ վնաս | - | 871 |
| Վերադասակարգվող հողվածներին վերաբերող շահութահարկ | 93,633 | 115,452 |
| | (374,534) | (461,809) |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո | (337,909) | (461,809) |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | 20,572 | 70,666 |
| Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ | 0.00157 | - |

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն


| Հազար ՀՀ դրամ | 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|----------------------------------|----------------------------------|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 26,012,823 | 34,036,384 |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 1,245,854 | 882,221 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 110,181,548 | 118,960,394 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | 4,411,861 | 31,923 |
| Հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 4,136,760 | 4,984,447 |
| Հիմնական միջոցներ | 5,165,342 | 5,142,456 |
| Ոչ նյութական ակտիվներ | 1,314,048 | 1,254,782 |
| Կանխավճար շահութահարկի գծով | 284,081 | 382,262 |
| Այլ ակտիվներ | 5,387,543 | 4,583,877 |
| ԸՆԴՐԱՄԵՆՆԴ՝ ակտիվներ | 158,139,860 | 170,258,546 |
| ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | |
| Պարտավորություններ | | |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 22,255,512 | 32,567,529 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 104,170,724 | 102,069,829 |
| Փոխառություններ | 7,511,491 | 13,341,038 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 731,041 | 725,839 |
| Այլ պարտավորություններ | 762,000 | 1,117,462 |
| ԸՆԴՐԱՄԵՆՆԴ՝ պարտավորություններ | 135,430,768 | 149,821,697 |
| Սեփական կապիտալ | | |
| Բաժնետիրական կապիտալ | 14,167,947 | 13,100,700 |
| Էմիսիոն եկամուտ | 1,387,422 | - |
| Գլխավոր պահուստ | 421,851 | 370,137 |
| Այլ պահուստներ | (492,684) | (154,775) |
| Չբաշխված շահույթ | 7,224,556 | 7,120,787 |
| ԸՆԴՐԱՄԵՆՆԴ՝ սեփական կապիտալ | 22,709,092 | 20,436,849 |
| ԸՆԴՐԱՄԵՆՆԴ՝ պարտավորություններ և սեփական կապիտալ | 158,139,860 | 170,258,546 |

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից 2016թ. ապրիլի 8-ին:

Վարդան ԱԹԱՅԱՆ
 Վարչության նախագահ




Գոհար ԳՐԻԳՈՐՅԱՆ
 Գլխավոր հաշվապահ



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

| | Բաժնե- տիրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Գլխավոր պահուստ | Վաճառքի համար մատչելի ներդրում- ների գծով վերագնա- հատման պահուստ | Հիմնական միջոցների գծով վերագնա- հատման պահուստներ | Զբաղիչված շահույթ | Ընդամենը |
|--|------------------------------|--------------------|--------------------|--|---|----------------------|-------------------|
| Հաշվեկշիռը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ | 13,100,700 | - | 370,137 | (77,377) | 384,411 | 6,972,432 | 20,750,303 |
| Շահաբաժիններ բաժնետերերին | - | - | - | - | - | (384,120) | (384,120) |
| Սեփականատերերի հետ գործարքներ | - | - | - | - | - | (384,120) | (384,120) |
| Տարվա շահույթ | - | - | - | - | - | 532,475 | 532,475 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | | | | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատում | - | - | - | - | (52,148) | - | (52,148) |
| Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս | - | - | - | (578,132) | - | - | (578,132) |
| Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆին. արդյունքին փոխանցված զուտ վնաս | - | - | - | 871 | - | - | 871 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ | - | - | - | 115,452 | - | - | 115,452 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | - | (461,809) | - | 532,475 | 70,666 |
| Հաշվեկշիռը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 13,100,700 | - | 370,137 | (539,186) | 384,411 | 7,120,787 | 20,436,849 |
| Բաժնետիրական կապիտալի | 1,067,247 | 1,387,422 | - | - | - | - | 2,454,669 |
| Հատկացում պահուստին | - | - | 51,714 | - | - | (51,714) | - |
| Շահաբաժիններ բաժնետերերին | - | - | - | - | - | (202,998) | (202,998) |
| Սեփականատերերի հետ գործարքներ | 1,067,247 | 1,387,422 | 51,714 | - | - | (254,712) | 2,251,671 |
| Տարվա շահույթ | - | - | - | - | - | 358,481 | 358,481 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | | | | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատում | - | - | - | - | 45,782 | - | 45,782 |
| Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս | - | - | - | (468,167) | - | - | (468,167) |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ | - | - | - | 93,633 | (9,157) | - | 84,476 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | - | (374,534) | 36,625 | 358,481 | 20,572 |
| Հաշվեկշիռը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 14,167,947 | 1,387,422 | 421,851 | (913,720) | 421,036 | 7,224,556 | 22,709,092 |

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

| | 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար |
|--|--|--|
| Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր | | |
| Շահույթ մինչև հարկումը | 546,309 | 626,556 |
| <i>Ծշգրտումներ</i> | | |
| Արժեզրկման ծախս | 2,398,395 | 4,106,633 |
| Բռնագանձված գույքի արժեզրկումից և իրացումից կորուստներ | 223,174 | 30,643 |
| Հիմնական միջոցների արժեքի վերականգնում | (103,881) | - |
| Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ | 493,748 | 450,305 |
| Հիմնական միջոցների օտարումից վնաս | 17,021 | 15,763 |
| Ստացվելիք տոկոսներ | (2,280,884) | 1,252,651 |
| Վճարվելիք տոկոսներ | 495,761 | (118,376) |
| Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ | (179,415) | (790,847) |
| Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները | 1,610,228 | 5,573,328 |
| <i>(Ավելացում)/Նվազում գործառնական ակտիվներում</i> | | |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | (320,892) | 490,042 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 9,379,240 | 3,741,696 |
| Այլ ակտիվներ | (623,137) | (713,108) |
| <i>Ավելացում/(Նվազում) գործառնական պարտավորություններում</i> | | |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | (826,458) | 912,909 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 1,490,851 | (10,366,793) |
| Այլ պարտավորություններ | (62,136) | 115,695 |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը | 10,647,696 | (246,231) |
| Վճարված շահութահարկ | 31 | (96,056) |
| Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր | 10,647,727 | (342,287) |
| Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր | | |
| Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում | (3,938,810) | (175,093) |
| Հիմնական միջոցների առք | (375,118) | (1,284,858) |
| Հիմնական միջոցների վաճառք | 71,922 | 45,973 |
| Ոչ նյութական ակտիվների առք | (140,062) | (382,650) |
| Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր | (4,382,068) | (1,796,628) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր | | |
| Շահաբաժինների վճարում | (500,321) | - |
| Բաժնետիրական կապիտալի թողարկում | 2,454,669 | (47,621) |
| Ֆինանս. կազմակերպ. վարկերի ստացում/(մարում) | (9,654,080) | 27,344,275 |
| Այլ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների մարում | (6,292,311) | (14,240,248) |
| Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր | (13,992,043) | 13,056,406 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում) | (7,726,384) | 10,917,491 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ | 34,036,384 | 21,118,118 |
| Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (297,177) | 2,000,775 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (Ծանոթ. 13) | 26,012,823 | 34,036,384 |
| Լրացուցիչ տեղեկատվություն | | |
| Ստացված տոկոսներ | 17,765,762 | 20,569,515 |
| Վճարված տոկոսներ | (12,935,601) | (12,144,318) |

**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2015Թ.
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) ղեկավարությունը պատասխանատու է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները միջազգային ստանդարտներին համապատասխան կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանել է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար, Բանկի գործունեության անընդհատության ապահովման կարողությունը գնահատելու համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է Բանկի ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար, ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար, Բանկի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2016թ. ապրիլի 28-ին:

Ստորագրված է
Բանկի ղեկավարության անունից

Վարչության նախագահ

Գլխավոր հաշվապահ

8 ապրիլի 2016թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն



Վարդան Աթայան

Գոհար Գրիգորյան



Բանկի 2015թ. մարտի 12-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ փոփոխվեց Յունիբանկի կազմակերպատիրավական ձևը փակ բաժնետիրական ընկերությունից բաց բաժնետիրականի:

2015թ. հուլիսի 1-ից Բանկը դարձավ Դեպոզիտար համակարգի հաշվի օպերատոր և կարգավորվող շուկայում հաշվարկային համակարգի անդամ:

Յունիբանկ ԲԲԸ-ն առաջին անգամ Հայաստանում՝ նախնական հրապարակային առաջարկի (IPO) միջոցով իրականացրեց բաժնետոմսերի թողարկում ՆԱՍԳ-ԱԶ ՕԷՄԷՔՍ Արմենիա ֆոնդային բորսայում:

Բաժնետոմսեր թողարկելու որոշումը պայմանավորված էր Յունիբանկի զարգացման որակապես նոր մակարդակ ապահովելու և իրական ժողովրդական բանկ դառնալու ռազմավարությամբ:

Առաջարկի արդյունքում տեղաբաշխման ընթացքում կնքվեց 186 գործարք, որոնց ընթացքում ընդհանուր առմամբ տեղաբաշխվեց 2,454,668,330 ՀՀ դրամ ընդհանուր գումարի 10,672,471 հատ հասարակ անվանական բաժնետոմս: Բանկը տեղաբաշխման էր ներկայացրել բաժնետոմսերը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով, տեղաբաշխման ընթացքում բաժնետոմսի գինը կազմեց 230 ՀՀ դրամ: Որպես բանկի բաժնետոմսերի մարքեթ-մեյկեր հանդես եկավ ԱՐՄԵՆԲԲՈԿ ԲԲԸ-ն:

Յունիբանկն այն բանկերից մեկն էր որը բաժնետոմսերի հրապարակային առաջարկի միջոցով կատարեց կապիտալի համարում: Սովորական լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Յունիբանկ ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալը կազմեց 15,5 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի կայուն ֆինանսական վիճակը, զարգացման հեռանկարներն ու արդյունավետության մակարդակը, հասարակության և ներդրողների վստահությունը փաստում են, որ հանրային, ժողովրդական բանկ դառնալը Յունիբանկի համար ժամանակի հրամայականն էր: IPO-ի միջոցով ներգրավված լրացուցիչ միջոցները Յունիբանկն ուղղելու է իր գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունների՝ մանրածախ բիզնեսի հետագա զարգացմանը և ՓՄՁ-ների հետ աշխատանքի ընդլայնմանը:

Այսօր Յունիբանկը ունիվերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկը առաջնորդվում է նախաձեռնողականության ու թափանցիկության սկզբունքներով, կիրառելով նորամուծություններ: 2015թ. դրությամբ Յունիբանկն ունի ավելի քան 282,000 ակտիվ հաճախորդ: Բանկի առաքելությունն է նպաստել ՀՀ բանկային համակարգի տևական և դինամիկ զարգացմանը և բանկային ծառայությունների նկատմամբ բնակչության պահանջարկի առավելագույնս բավարարմանը՝ որակյալ բանկային ծառայությունների մատուցման միջոցով:

2015թ. ընթացքում իրականացված միջոցառումների շնորհիվ Բանկն ապահովել է հետևյալ ցուցանիշները.

- **ԱԿՏԻՎՆԵՐ** (համաձայն ՖՀՄՍ-ի) - 158 մլրդ ՀՀ դրամ, 9-րդ տեղը բանկային համակարգում:
- **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** (համաձայն ՖՀՄՍ-ի) - 135 մլրդ ՀՀ դրամ, 9-րդ տեղը բանկային համակարգում:
- **ԿԱՊԻՏԱԼ** (համաձայն ՖՀՄՍ-ի) – 22.7 մլրդ ՀՀ դրամ, 10-րդ տեղը բանկային համակարգում:
- **ՇԱՀՈՒՅԹ** (համաձայն ՖՀՄՍ-ի) - 358 մլն ՀՀ դրամ, 11-րդ տեղը բանկային համակարգում:
- **ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐ** (համաձայն ՖՀՄՍ-ի)

2015թ.-ի արդյունքներով Բանկի վարկային պորտֆելը կազմել է 110 մլրդ ՀՀ դրամ, նվազել է 7%-ով, 8-րդ տեղը բանկային համակարգում:

Դրամային վարկային պորտֆելը կազմել է 38 մլրդ ՀՀ դրամ (ընդհանուր վարկային պորտֆելի 34%-ը), իսկ արտարժուրային վարկային պորտֆելը՝ 74 մլրդ ՀՀ դրամ (ընդհանուր վարկային պորտֆելի 66%-ը): Վարկավորման միջին տոկոսադրույքը 31.12.2015թ. դրությամբ կազմել է 15.96%:

Վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման արդյունքում 31.12.2015թ. դրությամբ վարկային պորտֆելում մանրածախ վարկերի ծավալը կազմել է 52%, ՓՄՁ վարկերինը՝ 28%, կորպորատիվ վարկերինը՝ 20%: ՓՄՁ վարկերի ծավալը նվազել է 12%-ով՝ կազմելով 29.4 մլրդ ՀՀ դրամ, ՓՄՁ վարկավորման միջին տոկոսադրույքը 31.12.2015թ. դրությամբ կազմել է 13.37%: Մանրածախ վարկերի ծավալը տարեվերջին կազմել է 54 մլրդ ՀՀ դրամ, նախորդ տարվա համեմատ նվազելով 10%-ով:

• **ԱՎԱՆՂՆԵՐ** (համաձայն ՖՀՄՍ-ի)

2015թ. արդյունքներով Յունիբանկը ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալով (թվով 22,977 հատ) գրադեցրել է 5-րդ տեղը ՀՀ բանկային համակարգում:

2015թ. տարեվերջի դրությամբ ժամկետային ավանդները կազմել են 91 մլրդ դրամ, որից 92%-ը՝ 84 մլրդ դրամը բաժին է ընկել ֆիզիկական անձանց ավանդներին:

• Ցպահանջ պարտավորությունների ծավալը կազմել է 12 մլրդ դրամ, որից 6.5 մլրդ դրամը կամ 54%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, իսկ 5.6 մլրդ ՀՀ դրամը կամ 46%-ը ֆիզիկական անձանց:

ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ պարտավորությունները կազմել են 368 մլն դրամ:

• **ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

2015թ. արտարժույթի փոխարկային գործառնություններից ստացված եկամուտը կազմել է 678 մլն ՀՀ դրամ, որը 2014թ. համեմատ նվազել է 9%-ով կամ 68 մլն դրամով :

• **ԿՈՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**

2015թ. կոմիսիոն եկամուտները կազմել են 1.3 մլրդ ՀՀ դրամ, որոնք 2014թ. համեմատ նվազել են 8 %-ով կամ 120 մլն ՀՀ դրամով:

• **ՊԼԱՍՏԻԿ ԶԱՐՏԵՐ**

2015թ. ընթացքում ակտիվ քարտերի քանակը տարեվերջին կազմել է 184,723-ի, բանկոմատների քանակը՝ 120, Սպասարկման կետերում շրջանառության ծավալը հասել է մոտ 73 մլրդ դրամի:

2015 թ. Բիզնես պլանի կատարողականներ (ՀՀՀՄ)

Բանկը գրեթե կատարել է 2015թ. համար նախատեսված խնդիրները: Բանկի ակտիվների 2015թ-ի փաստացի աճի ցուցանիշները կանխատեսվածի համեմատ կատարվել է 80 %-ով, վարկային պորտֆելի աճի պլանը կատարվել է 76 %-ով, պարտավորությունների աճի պլանը կատարվել է 99 %-ով, կապիտալը կազմել է 18,809 մլն դրամ:

Բանկի վարկային ներդրումներն առ 31.12.2015թ. կազմել են ընդհանուր ակտիվների 68%-ը : Պլանավորված և փաստացի ցուցանիշների շեղումը կազմում է 4%, ինչը պայմանավորված է տարեսկզբին վարկավորման գործընթացի պասիվության հետ:

Մանրաձախ բիզնեսի գծով պորտֆելը նախորդ տարվա համեմատ նվազել է 10 %-ով , ապահովելով պլանային աճի ցուցանիշները 96 %-ով՝

- հիփոթեքային պորտֆելը նախորդ տարվա համեմատ նվազել է 14 %-ով
- առանց գրավի սպառողական վարկերի ծավալը նվազել է 0.8 %-ով,
- սպառողական գրավով վարկերը նվազել են 0.4 %-ով
- ավտովարկավորման պորտֆելը նվազել է 50 %-ով նախորդ տարվա համեմատ, ինչը պայմանավորված է ավտովարկավորման ոլորտում Բանկի վարած զուսպ քաղաքականությամբ, շեշտը հիմնականում դրվել է առաջնային շուկայից ավտոմեքենաների վաճառքի վրա:

25.12.2015թ -ին Moody's Investors Service միջազգային գործակալությունը հաստատեց Յունիբանկի բանկային ավանդների B2/NP, բազային վարկային գնահատականի b3, կոնտրագենտի ռիսկի գնահատականի B1(cr)/NP(cr) վարկանիշները:

2015թ. հիմնական խնդիրները

Բանկի ղեկավարության 2015 թվականի հիմնական խնդիրն է եղել բարձրացնել Բանկի գործունեության արդյունավետությունը համալիր միջոցառումների իրականացմամբ - կորպորատիվ կառավարման մշակույթի կատարելագործում, ներքին հսկողության ուժեղացում, նոր տեխնոլոգիաների ներդրում, բանկային ռիսկերի վերլուծություն և կառավարում, շուկային արագ արձագանքում և մրցակցային բիզնես գործիքների առաջարկում, վարկային պորտֆելի առողջացում, բանկի գործունեությանը համահունչ կառուցվածքային փոփոխությունների իրականացում, տոկոսային և ադմինիստրատիվ ծախսերի վերանայում, անձնակազմի որակավորման բարձրացում:

Թույլ տվեք ներկայացնել Բանկի ռազմավարության իրագործման ուղղությամբ Բանկի կողմից իրականացված հիմնական աշխատանքներին.

Սպառողական վարկավորում

Քարտային ու մանր սպառողական վարկավորման ծավալների աճին ուղղված քաղաքականության արդյունքում 2015թ. Բանկին հաջողվեց պահպանել իր առաջատար դիրքերը մանրաձախ վարկավորման շուկայում:

Մանր սպառողական վարկավորման ծավալը տարեվերջի դրությամբ կազմել է 23.5 մլրդ դրամ (147,000 վարկ), իսկ պլաստիկ քարտերով վարկերի ծավալը՝ 3.8 մլրդ դրամ (14,500 վարկ), գրավով սպառողական վարկերի ծավալը՝ 11 մլրդ դրամ (1,800 վարկ), ավտովարկերի ծավալը՝ 1.3 մլրդ դրամ (430 վարկ), ոսկու գրավով ապահովված վարկերի ծավալը 352 մլն. դրամ (650 վարկ), հիփոթեքային վարկերի ծավալը՝ 14.3 մլրդ ՀՀ դրամ (1,400 վարկ), որից «Ազգային Հիփոթեքային Ընկերության» կողմի վերաֆինանսավորված վարկերի քանակը կազմել է 83 հատ՝ 811 մլն ՀՀ դրամ գումարի, իսկ «Բնակարան Երիտասարդներին» Ընկերության կողմից վերաֆինանսավորված

վարկերի քանակը կազմել է 63 հատ՝ 464 մլն. ՀՀ դրամ գումարի: Վարկային պորտֆելում քարտային ու մանր սպառողական վարկային պորտֆելի չափաբաժինը 31.12.2015թ. դրությամբ կազմել է 26% :

2015թ. մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 20.4%, տոկոսային եկամուտը կազմել է 11 մլրդ ՀՀ դրամ (տոկոսային եկամուտների 59 %-ը)՝ 2014թ-ի համեմատությամբ աճելով 0.7 մլրդ դրամով կամ 6.4%-ով:

2015թ. սպառողական վարկավորման գրանցված ցուցանիշները ապահովվել է հետևյալ միջոցառումների շնորհիվ.

- Յունիբանկի կողմից լիարժեք գործարկվել է CRM-համակարգերի ոլորտում առաջատար ProtoCRM կառավարման համակարգը: Ժամանակակից համակարգի ներդրումը բանկին հնարավորություն տվեց էապես կրճատել վարկերի հաստատման և ձևակերպման ժամանակը: 2015թ-ին համակարգի կողմից մշակված հայտերի քանակը հասել է 227,000-ի: Այսօր ապրանքների ձեռքբերման համար սպառողական վարկը Յունիբանկում հաստատվում է մեկ րոպեում : Ընդ որում, վարկային հայտը կարելի է ներկայացնել նաև օնլայն՝ առանց բանկ հաճախելու: Վարկերի ձևակերպումն իրականացվում է նաև Բանկի գործընկեր՝ խոշոր առևտրային ցանցերում :

- Բանկը համագործակցել է ավելի քան 250 կազմակերպությունների հետ, որոնց հետ ձեռք բերված համագործակցության շրջանակներում Բանկն իր ծառայությունները ներկայացնում է ավելի քան 500 վաճառատարահներում: Ներկայումս մանր սպառողական վարկավորման ոլորտում Բանկն առաջատար եռյակում է: Համագործակցության առավելություններից է եղել համատեղ մշակված մրցունակ վարկավորման գործիքները, ինչպես նաև գովազդային արշավների համատեղ կամ գործընկերոջ կողմից իրականացնելը :

- Ընդլայնվել է պրոմո-կետերի ցանցը՝ բացվել է թվով 18 պրոմո-կետեր, դրանց ընդհանուր թիվը հասցնելով 54-ի, որոնց միջոցով 2015թ.-ին տրամադրվել է 28,450 հատ վարկ, 6.2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի :

- Ակտիվորեն գովազդվել է վարկային ինտերնետ հայտերի ընդունման հնարավորությունը, կատարելագործվել է վարկային գործիքների առցանց վաճառքի գործընթացը: 2015թ-ին ինտերնետի միջոցով ստացված հայտերի քանակը կազմել է 2,100 հատ՝ ընդհանուր 773 մլն. ՀՀ դրամ գումարով, որից հաստատվել և տրամադրվել է 480 հատ վարկ՝ 162 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

- Բանկի 7 մասնաճյուղերում սկսվել է ոսկու գրավով վարկերի տրամադրում:

Քարտային բիզնես

Քարտային բիզնեսի զարգացումը Յունիբանկի գործունեության ռազմավարական ուղղություններից մեկն է: 2015 թվականին Բանկը շարունակել է իր հետևողական քայլերը թե գործող տեխնիկական միջոցների վերազինման, և թե նոր տեխնոլոգիաների ներդրման գործում:

Բանկը հանդիսանում է Visa և ArCa վճարային համակարգերի անդամ, անդամակցել է նաև Master Card վճարային համակարգին :

Քարտային սպասարկման տեխնոլոգիաների կատարելագործման նպատակով բանկը շարունակում է զարգացնել սեփական պրոցեսինգային կենտրոնը և հերթական անգամ հաջողությամբ անցավ PCI DSS ստանդարտի պահանջներին համապատասխանության սերտիֆիկացիոն աուդիտը:

Բիզնես վարկավորում

Հավատարիմ մնալով իր վարկային քաղաքականությանը՝ Բանկը շարունակել է դիվերսիֆիկացնել իր վարկային պորտֆելը՝ մեծացնելով մանրածախ վարկերի և ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում: Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս Բանկը վարել է պահպանողական քաղաքականություն, հիմնականում ակտիվները կարճաժամկետ տեղաբաշխվել են համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում: Այս նպատակով Բանկը պարբերաբար կատարել է տնտեսության ճյուղերի վերլուծություն, ինչպես նաև ՓՄՁ-ի գծով պլանային ցուցանիշները կատարելու նպատակով իրականացվել են ՓՄՁ վարկավորման գծով սքորինգային մոդելի մշակում, ՓՄՁ վարկավորման գծով աշխատակիցների որակավորման բարձրացում:

«Յունիստրիմ» դրամական փոխանցումներ

Շրջանառության կայուն աճի, շահավետ ցածր սակագների և լայն աշխարհագրության շնորհիվ «Յունիստրիմ» համակարգը 2015թ. ընթացքում ևս պահպանել է առաջատարի դիրքը, հանդիսանալով դրամական փոխանցումների ամենապահանջված համակարգը Հայաստանում:

«Յունիստրիմ» դրամական փոխանցումների միջազգային համակարգի հայաստանյան շրջանառությունը 2015թ.-ին անցած տարվա համեմատ նվազել է 18.6%-ով և կազմել 538.1մլն ԱՄՆ դոլար, ընդ որում դեպի Հայաստան կատարված փոխանցումների ծավալը կազմել է դոլար 329մլն ԱՄՆ դոլար՝ նվազելով 2014թ.-ի համեմատ 27.1%-ով, իսկ դեպի դուրս կատարված փոխանցումների ծավալը կազմել է դոլար 209.2մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 2014թ.-ի համեմատ 0.4%-ով:

Յունիբանկի կողմից սպասարկված փոխանցումների ծավալը հաշվետու տարում կազմել է 162.4մլն ԱՄՆ դոլար՝ նվազելով նախորդ տարվա համեմատ 43.1%-ով, ընդ որում դեպի Հայաստան կատարված փոխանցումների ծավալը կազմել է 103.4մլն ԱՄՆ դոլար՝ նվազելով 2014թ.-ի համեմատ 51%-ով, իսկ դեպի դուրս կատարված փոխանցումների ծավալը կազմել է 59մլն. ԱՄՆ դոլար՝ նվազելով 2014թ.-ի համեմատ 17.2%-ով: Յունիբանկի կողմից սպասարկված փոխանցումների քանակը հաշվետու տարում կազմել է 309.262՝ նվազելով նախորդ տարվա համեմատ 24.3%-ով:

Նվազել է նաև 1 փոխանցման միջին մեծությունը՝ 690 ԱՄՆ դոլարից հասնելով 525 ԱՄՆ դոլարի: Յունիբանկի կողմից սպասարկված դրամական փոխանցումների քանակական և ծավալային նվազումը պայմանավորված է համակարգին ՀՀ 16 բանկերի մասնակցությամբ:

Ռիսկերի կառավարում

2015թ. սկզբին ՀՀ բանկային համակարգը գործում էր բարձր ռիսկային միջավայրում, սակայն, ունենալով ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, Յունիբանկը կարողացավ դիմագրավել այդ մարտահրավերներին:

Բանկային ռիսկերին առնչվող տարատեսակ վերլուծություններն ու հաշվետվությունները, սթրեսս տեստերը, Ներքին աուդիտի կողմից կատարվող ստուգումները և հաշվետվությունները Բանկի ղեկավարությանը ժամանակին տրամադրումն ու նրանց կողմից համարժեք արձագանքը հնարավորություն են տալիս ժամանակին բացահայտելու և արդյունավետ կառավարելու Բանկի ֆինանսական և գործառնական ռիսկերը :

Հավատարիմ մնալով իր վարկային քաղաքականության 2015թ. Բանկը շարունակեց զարգացնել մանրածախ և փոքր ու միջին ձեռնարկություններին տրամադրվող վարկերի պորտֆելը, ինչը իր հերթին հանգեցնում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացմանը: Եթե 2011թ. Բանկի վարկային պորտֆելի 50% բաժին էր ընկնում թվով 94 վարկառուների, ապա 2015թ. Բանկի վարկային պորտֆելի 50% արդեն բաժին էր ընկնում թվով մոտ 500 վարկառուների:

2015թ. Salesforce համակարգի միջոցով Բանկը կատարելագործել է ավտոմատացված մանր սպառողական վարկերի տրամադրման գործընթացը՝ նվազեցնելով դրա հետ կապված գործառնական ռիսկերը: Մշտորինգային ճկուն համակարգը, ինչպես նաև դրա արդյունավետության պարբերաբար վերլուծություններն ու շտկումները, հնարավորություն են տվել Բանկին ձևավորելու մանր սպառողական վարկերի բարձր որակի պորտֆել:

Շնորհիվ որակյալ մասնագետների առկայության, Բանկի տարբեր ստորաբաժանումների ներդաշնակ աշխատանքի, անդերրայթինգի իրականացման մեխանիզմների անընդհատ լրամշակման, բիզնես գործընթացների հստակեցման և պարզեցման Բանկը կարողացել է կառավարել բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը՝ իր կողմից ընտրված ռիսկ-ախորժակի շրջանակներում:

Միջազգային կառույցների հետ աշխատանքներ

2015թ. Բանկը շարունակել է ակտիվ համագործակցել միջազգային կառույցների հետ:

2015թ. ընթացքում շարունակվել է Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) և Առևտրի և զարգացման Սևծովյան բանկի (BSTDB) հետ համագործակցությունը: Այդ նպատակով բանկը մշակել էր նոր վարկատեսակներ հատուկ նախատեսված փոքր և միջին ձեռնարկությունների համար:

Վարկերը տրամադրվում են ավելի մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ցածր տոկոսադրույքով և երկար ժամկետով: Տարվա ընթացքում Բանկը շարունակել է համագործակցությունը նաև Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամ (IFAD), ՓՄՁ ՉԱԿ հիմնադրամի հետ:

2015 թվականին Բանկը սկսեց համագործակցությունը նաև Եվրոպական ինվեստիցիոն Բանկի (EIB) հետ, այդ նպատակով մշակվեց նոր վարկատեսակ՝ նախատեսված գյուղատնտեսության, գյուղվերամշակման, զբոսաշրջության և սպասարկման ոլորտներում ՀՀ-ում գործունեություն իրականացնող ձեռնարկությունների ֆինանսավորման համար:

Միջազգային կառույցների հետ համագործակցության շնորհիվ, Բանկը հնարավորություն է ստանում ընդլայնելու բիզնես վարկավորման ծրագրերը՝ բարձրացնելով վարկային միջոցների հասանելիության մակարդակն ավելի մեծ թվով ձեռնարկատերերի համար:

Մասնաճյուղային ցանց

2015թ. ընթացքում Յունիբանկը շարունակել է ընդլայնել մասնաճյուղային ցանցը, բացելով Prive մասնաճյուղը: Ներկայումս Բանկի մասնաճյուղային ցանցն ընդգրկում է 45 մասնաճյուղ, որոնք աշխատում են ճկուն աշխատանքային գրաֆիկով:

Սպասարկման որակի կատարելագործման և բանկային ծառայությունների ընդլայնման շնորհիվ Բանկին հաջողվել է պահպանել և զգալիորեն ավելացնել հաճախորդների ընդհանուր քանակը: Բանկում 01.01.2015թ. դրությամբ սպասարկվել են 269.090 հաճախորդներ, որոնցից 7.482 իրավաբանական անձինք են, 261.608 ֆիզիկական անձինք են, իսկ 01.01.2016թ. դրությամբ՝ հաճախորդային բազան ներառել է ավելի քան 282.000 հաճախորդ, որոնց մեջ թվով 7.786 իրավաբանական անձինք են, մնացածը՝ ֆիզիկական անձինք:

Բանկը շարունակեց գործող մասնաճյուղերի վերակառուցման աշխատանքները՝ սպասարկման ‘մեկ պատուհանի’ անցման նպատակով, այդ թվում քայլեր է ձեռնարկում հաճախորդներին առավել հասանելի մինի-մասնաճյուղերի ստեղծման ուղղությամբ:

2015թ. շարունակվել են դեռևս 2012թ. սկսած վճարային տերմինալների տեղադրման աշխատանքները (այսօրվա դրությամբ առկա են թվով 81 վճարային տերմինալներ): Տերմինալներից օգտվող հաճախորդների թվի աճը վկայում է, որ տվյալ ծառայությունը պահանջված է ինչպես Երևանում, այնպես էլ՝ մարզերում:

2015թ. Յունիքանկը գործարկեց անհատական սպասարկման «Պրիվե» նախագիծը : Բանկն իր հաճախորդներին տրամադրում է հարմարավետ և հուսալի ֆինանսական ծառայություն, լիարժեք լուծումներ, որոնք ներառում են իրենց միջոցների արդյունավետ պլանավորումը և կառավարումը: «Պրիվե» նախագծի հիմնական սկզբունքը՝ կառուցել վստահելի հարաբերություններ հաճախորդների հետ, սահմանելով անհատական մոտեցում և խիստ գաղտնիություն:

2016թ. Յունիքանկը շարունակելու է ակտիվորեն զարգացնել մասնավոր բանկինգի ուղղությունը և համալրել ծառայությունների փաթեթը:

Կորպորատիվ կառավարում, Կադրային քաղաքականություն

Բանկը կարևորում է արդյունավետ կորպորատիվ կառավարումը, ինչպես նաև նրա դրական ազդեցությունը բանկի ֆինանսական ցուցանիշների եւ երկարաժամկետ ռազմավարական կայունության վրա:

Բանկի կադրային քաղաքականությունն ուղղված է անձնակազմի մանրակրկիտ ընտրությանը և ուսուցմանը, բարձր որակավորում ունեցող կադրային պոտենցիալի ձևավորմանը : Տվյալ քաղաքականությունն իրականացվում է Բանկի կորպորատիվ շահերի շրջանակներում՝ ներգրավելով առավել փորձառու մասնագետների, խրախուսելով նախաձեռնություններ ցուցաբերած աշխատակիցներին և նրանց առաջադրելով ղեկավար պաշտոնների: Հատուկ ուշադրություն է դարձվում պրոֆեսիոնալ մակարդակի աճին և օպտիմալ վարչակազմակերպչական կառուցվածքի ձևավորման վրա :

Ընտրության, թեստավորման և հարցազրույցների ընթացքում առանձնացվում են պատասխանատու, առաջադեմ և նպատակասլաց մասնագետներ, որոնք կիսում են Բանկի արժեքները և պատրաստ են դրանք զարգացնել: Ձբաղեցրած պաշտոնին համապատասխանության և որակավորման մակարդակի որոշման համար Բանկը պարբերաբար անցկացնում է անձնակազմի ատեստավորում և ռոտացիաներ:

2015թ.-ին կատարելագործվել են բոլոր բիզնես ուղղությունների մոտիվացիոն համակարգերը, ինչպես նաև սպասարկող անձնակազմի համար ներդրվել է գրեյդինգի նոր համակարգ: Բանկի անձնակազմի մոտիվացիայի և լոյալության բարձրացման նպատակով կազմակերպվել են կորպորատիվ միջոցառումներ և արտագնա աշխատանքային հանդիպումներ արդիական հարցերի քննարկման համար: Վերապատրաստումները ապահովվում են ինչպես արտաքին կազմակերպությունների կողմից, այնպես էլ ներքին ուժերով: Քննարկումներով և նորարարական մոտեցումներով հարուստ ինտերակտիվ դասընթացներ են կազմակերպվել Բանկի ղեկավար անձնակազմի համար՝ նախագծերի կառավարման, բիզնեսի զարգացման, մենեջմենթի ոլորտներում:

2015թ.-ի տարեվերջին Բանկի անձնակազմի թվաքանակը կազմել է 776:

Կատարելագործվել է նաև կորպորատիվ կառավարման համակարգը, մասնավորապես՝ Բանկում իրականացվել է վերահսկման գործառնությունների, կառուցվածքային ստորաբաժանումների պարտականությունների հստակ տարանջատում, ամրապնդվում են ներքին վերահսկողության գործառնությունները, ապահովվում է հասարակայնության հետ կապը և տեղեկատվության թափանցիկությունը:

Միջազգային կորպորատիվ կառավարման լավագույն սկզբունքները Բանկում ներդնելու և կորպորատիվ կառավարումը Բանկում առավել արդյունավետ դարձնելու նպատակով Բանկում ակտիվորեն գործարկվում են Խորհրդին և Վարչությանը կից հանձնաժողովները, որոնք իրենց լիազորությունների շրջանակներում քննարկում և որոշումներ են կայացնում տարաբնույթ հարցերի շուրջ և ներկայացնում են Խորհրդին և Վարչությանը:

Խորհրդին կից գործող հանձնաժողովներն են

Աուդիտի և ռիսկերի հանձնաժողով - տարվա ընթացքում գումարվել է 4 նիստ

Ներդրումային հանձնաժողով – տարվա ընթացքում գումարվել է 3 նիստ

Պարզևատրումների հանձնաժողով - տարվա ընթացքում գումարվել է 2 նիստ

Վարչությանը կից գործող հանձնաժողովներ են՝

Ակտիվների և պասիվների կառավարման և Սակագնային հանձնաժողով - տարվա ընթացքում գումարվել է 32 նիստ
Տեղեկատվական Տեխնոլոգիաների և Տեղեկատվական Անվտանգության հանձնաժողով - տարվա ընթացքում գումարվել է 7 նիստ

Անձնակազմի գնահատման հանձնաժողով – տարվա ընթացքում գումարվել է 18 նիստ

Գ-ույքագրման, գնումների և օտարման հանձնաժողով - տարվա ընթացքում գումարվել է 19 նիստ

Բանկում գործող մշտական հանձնաժողովներից են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովը և Վարկային կոմիտեն, որոնք տարվա ընթացքում գումարել են համապատասխանաբար 17 և 52 նիստ:

Գովազդային քաղաքականություն և հասարակայնության հետ կապեր

Հասարակայնության հետ կապերի և գովազդի ծառայությունների աշխատանքը հիմնականում միտված է եղել բանկի գործունեության մասին բնակչության իրազեկմանը, բանկի հեղինակության ամրապնդմանը, մատուցվող ծառայությունների ու գործիքների ներկայացմանն ու վաճառքների ծավալների մեծացմանը: Այդ նպատակով բանկը շարունակել է ակտիվ համագործակցությունը ՉԼՄ-ների հետ՝ ապահովելով հարյուրից ավելի հրապարակումներ:

IPO-ի շրջանակներում բանկը հաջողությամբ իրականացրեց լայն մարքեթինգային արշավ՝ ուղղված բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը և բանկի բաժնետոմսերում ներդրումներ կատարելու առավելությունների ներկայացմանը: 2015թ.-ին Յունիբանկը եթեր հեռարձակեց «Ժողովրդական բանկ» նոր հեռուստածրագիրը, զուգահեռաբար մամուլում նախաձեռնեց բացատրական հրապարակումների շարք՝ բաժնետոմսերի, արտասարժույթի շուկայի, վարկային պատմության կարևորության մասին:

Իր գործունեության վերաբերյալ նորությունները բնակչության համար ավելի հասանելի դարձնելու և հաճախորդների հետ արագ հետադարձ կապի ապահովման նպատակով, բանկը ակտիվորեն ներգրավվել է սոցիալական ցանցերում՝ Facebook-ում, LinkedIn-ում, Twitter-ում և YouTube-ում: Facebook-ում օգտատերերի թվով Յունիբանկը ՀՀ բանկային համակարգի առաջատարն է՝ ավելի քան 67 000 օգտատեր:

Արդյունքում 2015թ.-ին ՄԵԲԿՈՒԲԻ ամենամյա մրցանակաբաշխությունը Յունիբանկը լավագույնը ճանաչվեց Հայաստանի Ժողովրդական բանկ անվանակարգում:

Gallup International-ի հայկական ներկայացուցչության հարցման տվյալներով, Յունիբանկը բնակչության կողմից ճանաչվածությամբ ՀՀ բանկերի շարքում զբաղեցրեց երկրորդ տեղը:

Տարվա ընթացքում իրականացվել են մի շարք գովազդային միջոցառումներ, որոնք ներառել են բոլոր մեդիա ուղղությունները: Մասնավորապես, բանկի գործիքների գովազդն իրականացվել է 12 առաջատար ՋԼՄ-ների կայքերում, սոցիալական ցանցերում, հեռարձակվել է բոլոր առաջատար հեռուստա և ռադիոալիքներով: Արտաքին գովազդն իրականացվել է ավելի քան 40 վահանակների և LED էկրանների միջոցով: Արդյունքում, ինչպես կանոն, շեշտակի ավելացել է գովազդվող գործիքներից օգտվող հաճախորդների թիվը:

Յունիբանկն իր գործունեությունն իրականացնում է սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն և ակտիվ մասնակցություն ունենում մասնաշաղկապի և հանրային ծրագրերում:

Յունիբանկը և անձամբ Գ-ազիկ Ջաբարյանը ակտիվորեն աջակցում են տարբեր մանկական հիմնադրամներին, այդ թվում՝ «Նվիրիր կյանք» հիմնադրամին, օգնում են իրականացնել մանկական սպորտային մրցաշարեր: Բանկը Հայաստանում իրականացրել է ֆինանսական աջակցության դպրոցներին ծրագիրը, աջակցում է ավիամոդելային խմբակին: Բանկը ավանդաբար աջակցություն է ցուցաբերել «Էրեբունի-Երևան» տոնին, "Հայաստան" համահայկական հիմնադրամին, Հայաստանի Երիտասարդական սիմֆոնիկ նվագախմբին, տրամադրել է հովանավորչական աջակցություն ՀՀ Պետական ֆիլհարմոնիային:

ՀՀ Կենտրոնական Բանկի վերահսկողության արդյունքները

Բանկի կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ ՀՀ ԿԲ կողմից տարվա ընթացքում Բանկին ներկայացվել է 4 տեղեկացում, 1 նախազգուշացում և 2 տուգանք ընդհանուր 500.000 ՀՀ դրամի չափով խախտումները վերացնելու և դրանք հետագայում բացառելու հանձնարարականով:

2015թ. ընթացքում ՀՀ բանկերի կողմից բանկային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումների համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից պատասխանատվության միջոցներ են կիրառվել թվով 9 (նախորդ տարի 14) բանկերի նկատմամբ:

2016թ. Բանկի հիմնական խնդիրները

Բանկի ղեկավարության 2016 թվականի հիմնական խնդիրն է բարձրացնել Բանկի գործունեության արդյունավետությունը համալիր հետևյալ միջոցառումների իրականացմամբ՝

- բանկի ներդրումային գրավչության բարձրացում
- միջազգային համագործակցության ընդլայնում
- ռեսուրսային բազայի և վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիա
- բանկային ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործում
- իրացվելիության վերահսկողություն և պահուստների կառավարում
- կորպորատիվ կառավարման արդյունավետության բարձրացում
- բանկի մասնաճյուղային ցանցի օպտիմալացում և մեկ պատուհանով սպասարկման ամբողջական ներդրում
- խաչաձև վաճառքի ակտիվ զարգացում և հաճախորդների սպասարկման որակի բարձրացում
- Յունիբանկ-Պրիվե նախագծի առաջխաղացում
- քիզմեսի արդյունավետության բարձրացում և ռեսուրսների և ծախսերի օպտիմալացում